ՀՏԴ 371.31.809.198.1 *Մայրենիի դասավանդման մեթոդիկա*

Աննա Պետրոսյան մ.գ.թ. դոցենտ
ԱՀ, ԿԳՍ նախարարություն, Մեսրոպ Մաշտոց Համալսարան

ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԸ՝ ՈՐՊԵՍ ՍԱԿԱՎԱԿԱԶՄ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՆ

Հոդվածում ներկայացված են սակավակազմ դպրոցում աշակերտների հայրենասիրության գործառույթի իրականացման որոշ առանձնահատկություններ: Կարևորվում է նրանց սոցիալականցման խնդիրը: Աշակերտների մոտ դաստիարակությունն և ուսուցումը հանդես են գալիս միևնույն բովանդակային հարթության վրա, և անհատը հարմարվում է մշակույթին և դառնում հասարակության լիիրավ և լիարժեք անդամ: Այդ գործընթացում մեծ դեր ունի աշակերտների արժեքային համակարգի ձևավորումը:

Բանալի բառեր՝ *համակազմ դասարաններ, սակավակազմ կրտսեր դպրոց, հայրենասիրություն, արժեքային համակարգ, սոցիալականացում, սոցիալական հարմարեցում, ինտերիորիզացիա, բարոյական հատկանիշներ, ճանաչողական հետաքրքրություն:*

Анна Петросян

ФАКТОР ПАТРИОТИЗМА КАК СРЕДСТВО СОЦИАЛИЗАЦИИ И ФОРМИРОВАНИЯ ЦЕННОСТЕЙ У УЧЕНИКОВ МАЛОЧИСЛЕННЫХ ШКОЛ

В статье представлены некоторые аспекты внедрения патриотизма в воспитательном процессе в малокомплектной школе. Особое внимание уделяется проблеме социализации. Воспитание и обучение учащихся проявляются в одной и той же плоскости, в результате личность адаптируется к культуре и становится полноправным членом общества. В этом процессе большую роль играет ценностная система учащихся.

Ключевые слова: обьединенные классы, малокомплектные младшие школы, патриотизм, ценностная система, социализация, социальная адаптация, интероризация, моральные качества, познавательные интересы.

Anna Petrosyan

THE FACTOR OF PATRIOTISM AS A MEANS SOCIALIZATION AND FORMATION OF THE VALUES OF THE STUDENTS IN THE SMALL SCHOOLS

The paper presents some features of implementation of students' patriotism in limited schools.The problem of socialization is highlighted. The upbringing and teaching of pupils comes from the same content, and the person adapts to a culture and becomes a full member of the society. The value system of pupils has a great role in this process.

Key words: *co-classrooms, small/limited junior schools, patriotism, system of value, socialization, social adaptation, interference, moral qualities, cognitive interest.*

Սակավակազմ դպրոցներում կարևորելով հայրենասիրությունը, որպես վեհ արժեք, ուսուցիչը աշակերտներին ներգրավում է հասարակական կյանք, նրան դարձնելով հայրենիքի լիիրավ պաշտպան:

Հայրենիքը հենց այն է, որ անհնար է հասկանալ խելքով, չափել մետրերով, նրան կարելի է և պետք է հավատալ միայն:

Վարդգես Պետրոսյան

Սակավակազմ դպրոցների հարցը, որպես գերխնդիր, տարիներ շարունակ հուզել է թե՛ արտերկրի, թե՛ Ռուսաստանի, թե՛ Հայաստանի և թե՛ Արցախի դպրոցներում աշխատող ուսուցիչներին, մեթոդիստներին:

Սակավակազմ դպրոցը կարող է լինել երկհամակազմ, որտեղ միավորված են երկու դասարաններ /երկկազմ/ և միահամակազմ, որտեղ միավորված են բոլոր դասարանները՝ հիմնականում կրտսեր օղակի 1-ին, 2-րդ և 3-րդ և 4-րդ դասարանները: Սակավակազմ դպրոց երևույթը պայմանավորված է տվյալ տարածաշրջանի սոցիալ-տնտեսական պայմաններով, հիմնավորված այդպիսի պայմաններում անգամ սերնդի կրթության և դաստիարակության խնդիրները կրթության չափորոշիչներին համահունչ լուծելու դիրքորոշումներով:

Մենք, օգտագործելով արտասահմանյան և ռուսական հարուստ գրականություն, օգտվելով համացանցային նյութերից և համակարգելով դրանք, սակավակազմ դպրոցներում ուսումնական գործընթացի հիմնական նպատակներից՝ ուսուցանող, զարգացնող, դաստիարակող, կփորձենք վեր հանել հայրենասիրության դաստիարակող գործառույթը նման դպրոցներում աշակերտների սոցիալականացման և արժեհամակարգի ձևավորման համար:

Հայրենասիրությունը ծագում է լատիներեն «պատրիոտ» բառից, նշանակում է՝ հայրենիքը սիրող: Հայրենասիրությունը բարոյական բարձր որակ է: Այն սոցիալական դիրքորոշում է, որի հիմնական բաղադրիչը *սերն* է: Մարդու հայրենասիրությունը հանդես է գալիս և մարմնավորվում տվյալ մարդու (դպրոցականի)՝ դեպի իր հայրենիքն ունեցած սիրո մեջ: Սերը ոչ միայն հայրենիքի նկատմամբ է, այլ նաև հայրենիքում ապրող ժողովրդի նկատմամբ: Երբ ասում ենք հայրենիք, ապա առաջին հերթին հասկանում ենք հայրենիքում ապրող ժողովուրդը: Եթե հայրենիքում ժողովուրդ չկա, ուրեմն հայրենիք չկա: Առանց հայրենիքի, առանց հարազատ ժողովրդի մարդը լքյալ է, ինչպես Ռոբինզոնը: Նշանակում է՝ հայրենիքից թանկ, ժողովրդից թանկ ոչինչ չկա: Ցիցերոնն ասում էր. «Մեզ համար թանկ են երեխաները, մերձավոր ազգականները, բայց որևէ բանի նկատմամբ սիրո բոլոր պատկերացումները միավորված են մեկ բառի մեջ՝ «Հայրենիք»[1, ¿ç 234]:

Ցանկացած մարդու համար իր հայրենիքը սկսվում է իր տնից, իր բակից, իր այգուց: Հայրենիքը սկսվում է իր երկրի մի թիզ հողից, մի կում ջրից, մի հանդամասից, մի կտոր երկնքից: Եվ ամենակարևորը՝ իր մայրենի լեզվից: Եթե այս ամենը մարդը չի հասկանում, ապա «հայրենիք» հասկացությունը նրա համար կդառնա մի ինչ-որ անորոշություն[1, էջ 235]:

Դպրոցը, ուսուցիչները, ծնողները պարտավոր են ձևավորել երեխաների հայրենասիրական զգացմունքները: Պարտավոր են նրանց մեջ սերմանել հոգատար վերաբերմունք հայրենիքի պատմության, մշակույթի, հայրենիքում ապրող հարազատ ժողովրդի, ազգի ավանդույթների, սովորույթների նկատմամբ: Անկախ տարիքից, հասարակության բոլոր անդամների մեջ պետք է սեր դաստիարակել հարազատ վայրերի, իրենց գյուղի, ավանի, քաղաքի, հայրենի բնաշխարհի նկատմամբ:

Հայրենասիրական գործառույթի իրականացման առումով սակավակազմ դպրոցում աշակերտները՝

- կընդլայնեն Հայաստան աշխարհի, նրա հերոս զավակների մասին տեղեկությունների իմացությունը, կխորացնեն ճանաչողական հետաքրքրությունը հայրենի երկրի նկատմամբ,
- կամրակայեն տեքստում նկարագրվող հերոսների վարքագծի և արարքների վերաբերյալ համեմատելու, պարզ եզրակացություններ կատարելու կարողությունները, կբնութագրեն հերոսին և կվերլուծեն նրանց արարքները,
- տեղեկատվական աղբյուրներից կորոնեն-կգտնեն տեղեկություններ նկարում պատկերված որևէ հերոսի մասին, կպատրաստեն հաղորդում և կներկայացնեն ընկերներին,
- ձևավորված բարոյական արժեքները կօգտագործեն ինքնադաստիարակման նպատակով,
- կկարողանան գնահատել գործող անձանց վարքագծի դրդապատճառները, գնահատել և ապրումակցել նրանց,
- կվերլուծեն բնագրի բովանդակությունը՝ արտահայտելով սեփական զգացմունքներն ու տպավորությունները,
- կմեկնաբանեն և իրենց վերաբերմունքը կարտահայտեն հայրենիքի, պատերազմի և խաղաղության վերաբերյալ
- կկարողանան կապեր գտնել բնագրի բովանդակության, նկարազարդման և սեփական կենսափորձի միջև:

Կրթության նպատակը անհատին ոչ միայն գիտելիքներով զինելն է, այլև նրա մեջ բարոյական որոշակի հատկանիշներ՝ արժեքներ ձևավորելը: Արժեքային կրթությունը ի սկզբանե կրթության անքակտելի բաղադրիչն է եղել: Ինչպես ամբողջ աշխարհում, Հայաստանում էլ այսօր արժեքային կրթությունը հասարակությանը հուզող խնդիրներից մեկն է: Մեզանում արժեքային կրթության նկատմամբ ավանդաբար ընդունված է հետևյալ մոտեցումը. դպրոցն ու ծնողները փորձում են բարոյական ժառանգությունը փոխանցել նոր սերնդին՝ նրանց մեջ լավ արժեքներ սերմանելով և հաստատելով բարոյական այլևայլ հատկանիշների ճշմարտացիությունը[11, էջ 16]:

Արժեքային կրթության նոր՝ արևմտյան մանկավարժության մեջ մշակված մոտեցման հիմքում մտածական հմտությունների ձևավորման սկզբունքն է: Ըստ սրա՝ աշակերտներին պետք է օգնել իմաստավորելու որոշակի արժեքներ, այսինքն՝ նրանց պետք է խրախուսել սեփական կենսափորձի և զանազան հարցադրումների միջոցով որոշել, թե իրենք ինչպիսի մարդ են ուզում դառնալ, ինչպիսի ավանդույթներ արժե պահպանել: Ուստի շատ կարևոր է առանձնահատուկ ուշադրություն դարձնել դասագրքերի նյութերին, ինչպես նաև ներկայացված հերոսների վարքագծի վերլուծությանը և դրա միջոցով որոշակի արժեքների բացահայտմանը: Սակայն վերլուծությունը ենթադրում է առաջին հերթին երեխաների գործուն մասնակցություն, այսինքն՝ աշակերտները պետք է հնարավորություն ունենան ազատորեն արտահայտելու իրենց կարծիքը, զգացմունքները, որոշակի հարցադրումներ անելու, ընկերների հետ քննարկելու, դատողություններ անելու հերոսների վարքագծի մասին, գնահատելու և իրենց համար բացահայտելու այս կամ այն արժեքը:

Ստորև ներկայացնում ենք սակավակազմ տարրական դպրոցում աշակերտների արժեհամակարգի բնութագրիչները, որոնց միջոցով նրանք կդառնան սոցիալականացված անձիք:

	Երկրորդ դասարան	*Երրորդ դասարան*	*Չորրորդ դասարան*
Դասի նպատակը	*Դաստիարակող նպատակ՝* Արժեքային համակարգ **1.** Ընթերցասիրություն, հարգանք գրքի նկատմամբ: **2.** Գեղեցիկը տեսնելու, ընկալելու և գնահատելու կարողություն: **3.** Ինքնուրույն աշխատանքով իր հետաքրքրությունները բավարարելու ձգտում: **4.** Ձևավորել սեփական անձի գնահատում, և վստահություն իր ուժերին: **5.** Իր ազգային պատկանելության գիտակցում: **6.** Հարգանք դիմացինի արժանապատվության և ինքնության նկատմամբ: **7.** Բարին, մարդկայինը տեսնելու,	*Դաստիարակող նպատակ՝* Արժեքային համակարգ **1.** Ընթերցասիրություն, հարգանք գրքի նկատմամբ: **2.** Գեղեցիկը տեսնելու, ընկալելու և գնահատելու կարողություն: **3.** Ինքնուրույն աշխատանքով իր հետաքրքրությունները բավարարելու ձգտում: **4.** Ձևավորել սեփական անձի գնահատում, և վստահություն իր ուժերին: **5.** իր ազգային պատկանելության գիտակցում: **6.** Հարգանք դիմացինի արժանապատվության և ինքնության նկատմամբ: **7.** Բարին, մարդկայինը տեսնելու, ընկալելու և գնահատելու	*Դաստիարակող նպատակ՝* Արժեքային համակարգ **1.** Ընթերցասիրություն, հարգանք գրքի նկատմամբ: **2.** Գեղեցիկը տեսնելու, ընկալելու և գնահատելու կարողություն: **3.** Ինքնուրույն աշխատանքով իր հետաքրքրությունները բավարարելու ձգտում: **4.** Ձևավորել սեփական անձի գնահատում, և վստահություն իր ուժերին: **5.** Իր ազգային պատկանելության գիտակցում: **6.** Հարգանք դիմացինի արժանապատվության և ինքնության նկատմամբ: **7.** Բարին, մարդկայինը տեսնելու, ընկալելու և գնահատելու կարողություն: **8.** Ձևավորել մայրենի լեզվի անհրաժեշտության և առաջնայնության գիտակցում:

	ընկալելու և գնահատելու կարողություն: **8.** Ձևավորել մայրենի լեզվի անհրաժեշտության և առաջնայնության գիտակցում: Հասկացանք, որ ➢ Սիս + Մասիս=Արարատ: ➢ Ինչ սխրանքներ է կատարել Սասունցի Դավիթը: ➢ Հազարավոր տարիներ առաջ քո ապուպապերը կառուցել են Էրեբունի քաղաքը, որն այսօրվա Երևանն էէ, Լ'ավ սովորիր, մեծացի'ր ուժեղ, շարունակի'ր կառուցել Երևանը: ➢ Էջմիածինը մեր գլխավոր եկեղեցին է: ➢ Հացը մեծ բարիք է: ➢ Ինչպես են կառուցում ժայռափոր եկեղեցին: ➢ Մենք ապրում ենք Երկիր մոլորակի վրա, որն ուրիշ ութ մոլորակների հետ պտտվում է Արեգակի շուրջը:	կարողություն: **8.** Ձևավորել մայրենի լեզվի անհրաժեշտության և առաջնայնության գիտակցում: Հասկացանք, որ ➢ Թե ինչու ենք մեզ հայ անվանում, մեր երկիրը՝ Հայաստան, մեր լեզուն՝ հայերեն: ➢ Ինչ սխրանքներ է կատարել Սասունցի Դավիթը: ➢ Հայկի սխրանքի շնորհիվ մենք հայ մնացինք, Մաշտոցի սխրանքի շնորհիվ խոսում և գրում ենք հայերեն: ➢ Լեզուն հզոր զենք է, որը պաշտպանում է և՛ քեզ, և՛ քո հայրենիքը: Ամենուր խոսի՛ր այնպես, որ հայոց լեզուն փայլի Թուր Կեծակիի պես: ➢ Ամեն մարդ իր գործով պիտի զբաղվի: Քո գործը սովորելն է. Սովորի՛ր սիրով: ➢՝ Ինչը բացատրելի չէ այսօր, բացատրելի կդառնա վաղը՝: Դու կարող ես լինել վաղվա բացահայտումների մասնակիցը: Իմացի՛ր. Քեզնով և քո բացահայտումներով ևս կհզորանա մեր հայրենիքը: ➢ Հերոսներն անմահ են իրենց սխրանքներով	Հասկացանք, որ ➢ Դու քո երկրին սրտի՛ց նայիր, Սիրո ծոցի՛ց, ձորից նայի՛ր, Արագածի լույս գագաթի՛ց, Սրտիդ միջի՛ց նորից նայի՛ր: Եվ դու կզգաս, ով էլ լինես, Որ մեծ է մեր Հայաստանը, Ուր էլ լինես՝ քո սրտի մեջ Քեզ հետ է միշտ Հայաստանը: Հրաչյա Մաթևոսյան ➢ Դու դեռ շատ լեզուներ ես սովորելու և իրավունք կունենաս հպարտանալու դրանով: Սակայն հիշի՛ր՝ շատ լեզուների իմացությամբ հպարտանալու իրավունք ունի նա, ով չգիտի իր մայրենին: ➢ Դու իմացար, որ քո մեջ մի կայծ վառելու համար ուսուցիչն իր մեջ լույսի մի ամբողջ ծով է կուտակում: ➢ Դու էլ հիմա կաղնու մի ծիլ ես, որը հետո հայրենիքի համար դառնալու է հզոր կաղնի: ➢ Երազանքիդ հասնելուն քեզ կօգնեն հայրենի հողն ու ջուրը, արևն ու երկինքը: ➢ Սևանի մեջ թափվում է 28 գետ ու գետակ: Ծովին խառնվող գետի նման դո՛ւ էլ պիտանի եղիր քո հայրենիքին: ➢ Մեծ ու Փոքր Մասիսները ձեռք ձեռքի տված կարոտով սպասում են քո հայրենանվեր գործերին: ➢ Լավ բան մտածիր, որ լավ բան կատարվի

Հայրենասիրական արժեքների ձևավորումն ու զարգացումը մանավանդ համագործակցային ուսուցման դրույթների կիրառմամբ, խմբային աշխատանքներով տանում է աշակերտի սոցիալականացման: Սոցիալիզացիայի (անձնավորվելու) ողջ ընթացքն ի վերջո հանգում է նրան, որ անհատը անձ է դառնում՝ <u>ձեռք</u> բերելով հասարակական պատմական փորձը, այնուհետև իր վրա է վերցնում այդ փորձը մատաղ սերնդին փոխանցելու պարտականությունը:

Սոցիալականացումը հասարակության մեջ և պրակտիկ գործունեությունում անձի սոցիալական վարքի յուրացման և ակտիվ վերարտադրման գործընթաց է և արդյունք: Այն անհատի հարաբերակցումն է սոցիումի հետ, ներգրավումը հասարակական կյանք, կոլեկտիվային վարքի

ուսուցումը, ինքնահաստատումն և սոցիալական դերերի իրականացումը: Սոցիալականացում անվանվում է անձնայնացման գործընթացը, նրա ուսուցումը, դաստիարակումն ու տվյալ հասարակությանը հատուկ սոցիալական նորմերի, արժեքների, դրույթների, վարքային մոդելների յուրացումը:

Սոցիալականացումը լինելով դաստիարակության և ուսուցման հետ միևնույն բովանդակային հարթության վրա, ունի բոլորովին այլ պահանջներ. իր մեջ ներառում է ոչ մտադրված, ինքնաբուխ ազդեցություններ, որոնց շնորհիվ անհատը հարմարվում է մշակույթին և դառնում հասարակության լիիրավ և լիարժեք անդամ:

Մարդու մոտ սոցիալական բնութագրիչների ձևավորումը սկսում է ծնված պահից և այլ մարդկանց հետ հարաբերությունների ստեղծումից: Սոցիոլոգիան մարդուն չի դիտարկում որպես կենսաբանական օրգանիզմ, այլ դիտում է որպես սոցիալական էակ: Առանձնացնում են անհատի սոցիալականացման հետևյալ փուլերը՝ սոցիալական հարմարեցում (ադապտացիա) և ինտերիորիզացիա (սոցիալական նորմերի, օրենքների, կանոնների ընդունում) [7]:

Առաջին շրջանը վաղ սոցիալիզացիան է, որն ընդգրկում է մինչև երիտասարդության տարիքի վերջը, իսկ մյուս շրջանը՝ դրանից հետո ընկած շրջանները: Սոցիալական ադապտացիան իրենից ներկայացնում է անհատի հարմարեցումը սոցիալական միջավայրին, իսկ ինտերիորիզացիան գործընթաց է, որի ժամանակ մարդու ներաշխարհում սկսում են սերմանվել սոցիալական կանոնները, օրենքները, նորմերը:

Սակավակազմ դպրոցներում կարևորելով հայրենասիրությունը, որպես վեհ արժեք, ուսուցիչը աշակերտներին ներգրավում է հասարակական կյանք, նրան դարձնելով հայրենիքի լիիրավ պաշտպան:

Հայրենիքը հենց այն է, որ անհնար է հասկանալ խելքով, չափել մետրերով, նրան կարելի է և պետք է հավատալ միայն:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Ամիրջանյան Ց. Ս. <<Մանկավարժություն>>**
2. Թորոսյան Կ. և ուրիշներ ,<<Մայրենի 2>>,
3. Թորոսյան Կ. և ուրիշներ ,<<Մայրենի 3>>,
4. Թորոսյան Կ. և ուրիշներ ,<<Մայրենի 4>>,
5. Ղույումչյան Գ. Ե. <<Մանկավարժություն>>, Գիրք 1, Երևան, <<Զանգակ 97>>, 2005թ. 463 էջ.:
6. В.П. Стрезикозин, Урок в сельской малок7. Требования к условиям и организация обучения школьников в малокомплектных школах.
7. http: / /www.ural-cher.ru /GUON/ oso /trebmal.htm.
8. Коллективный способ обучения, Эвристическая карточка, http: / /keo-kpas.com/ mit/ met/ snp/.
9. Аграрная школа, http:/ / www.akipkro.ru /education /s-school /progpl.html.
10. Малокомплектная школа, <Сельская школа>, 17.05.2003г.
11. Հանրակրթական պետական կրթակարգ, չափորոշիչ ,,Անտարես,, Երևան, 2004թ: